

Թուած են նաև նոյն իսկ գիրերը որ կը գտնուին իւրաքանչիւր երեսին մէջ, որք են իրը 52, 375 առ մի էջ. իսկ բովանդակ թերթին մէջ 840, 000: իսկ կիտադրական նշանները ինչպէս են երկք կէտերը, շեշտերը, գծիկները, փակագիծերը և այլն՝ են 50, 000:

Temps լրագրին էջի մը մէջ բովանդակուած բառերու գումարը հազիւ երբեք կ'անցնի 10, 000, մանաւանդ առաջի երեսին մէջ ուր 7000–8000 բառէ աւելի ոչ երբեք կը գտնուի, որոց գումարը 4 երեսին միանգամայն կ'ընէ 40, 000 բառ: Հետեւաբար թայրիլը 5<sup>1</sup><sub>2</sub> անգամ՝ աւելի նիւթ կը պարունակէ քան զTemps:

#### ԳԻՇԵՐԱՀԱՒԱԾՈՒՅՈՒՆ 1893 Ա.ՄԻՒՆ.

Աստղաբաշխական գարունը կըսկսի մարտ ամսուն մէջ, այսինքն թէ երկրիս Հասարակածը այս ամսեան մէջ շշտակի արեգական կեդրոնին վրայէն կ'անցնի: Այս անցքը պիտի հանդիպի ըստ Նոր Տումարին մարտի 20ին երկուշաբթի օր. ուստի ըստ ինքեան մարտի 20ին պէտք էր գիշեր ու ցորեկ հաւասար լինէին, որ է՝ իւրաքանչիւրը 12 ժամ լինէին. բայց իսկապէս այնպէս չի լինիր, որովհետեւ մեր երկիրը շրջապատող օդը բեկանելով արեգական ճառագայթները, կը ցուցընէ մեզ զայն յառաջ քան զհորիզոննէն վեր ելլեն: Թէ որ վնասունք աստղաբաշխական տարեգրոց մէջ կը գտնենք որ մարտի 20ին տիւր կ'առաւելու քան զգիշեր 10 վայրկենէն աւելի. նոյնպէս նաև 19ին գարձեալ տիւր 2 վայրկեան աւելի երկայնէ քան զգիշեր. ուստի պէտք է յառաջել 18ին, յորում գիշերը կ'երկննայ քան զտիւ գրեթէ 4 վայրկեան: Հետեւաբար գիշերահաւասարը կը կատարուի մարտի 19 ին մերձաւորապէս, իսկ այն երկիրները որ Պարիսու միջօրէականէն 6 ժամ կը կանիսն, ինչպէս է Թոնքին, անոնց գեշերահաւասարը կատարեալ կը լինի: Գարնանային գիշերահաւասարէն վերջը տիւր աւելի երագաբար կը յառաջէ քան յառաջն, այնպէս որ եթէ մարտ 9ին գիշերը քան զցերեկը աւելի երկայնէ 4<sup>4</sup>. 10', նոյն ամսոյն 29ին ցերեկը քան զգիշեր կ'առաւելու 4<sup>4</sup>. 14'. Որով տասը օրուան ընթացից մէջ տիւր յառաջեց քան զգիշերը 4 վայրկեան: